Հոգեւ. քահ. Եսայեանց

4369

Բայց Սանեմն

281.69
Ե-58

Թիֆլիս
1915

2010

6095
~~0391~~
1915 № 1316
(8)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թիֆլիսի թեմի Առաջնորդ գեր. Մեսրոպ եպիսկոպոսին.

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ.

Ես մինչև այսօր հաւատացած էի թէ մարդկային խիղճը մի օր կը խօսի ձեր մէջ իմ վերաբերմամբ և այդ յուսով էլ համբերում էի. բայց այժմ երևաց, որ շատ եմ սխալուած եղել, և դուք իմ համբերութիւնը շահագործելով այժմ դանակը ոսկրին հասցրիք և ստիպեցիք ինձ վերջապէս հրապարակ դուրս գալու Ձեր դէմ. և ես այլևս ինչպէս լռեմ, երբ Դուք աշխատում էք ուղղակի ռովամահ անել իմ ամբողջ գերդաստանս՝ կտրելով մեր ապրուստի բոլոր միջոցները։

Դուք, Սրբազան հայր, նախ և առաջ սուտի փայլուն կերպով տանելով այն հալածանքը, որ սկսուած էր ինձ դէմ Ձեր նախորդից, ամեն արդարութիւն ոտքի տակով տուիք ու բռնաբարեցիք ժողովրդական իրաւունքները ինձ բոլորովին կործանելու համար։ Դուք ձեր այդ նպատակին հասնելու համար կոյր գործիք գտաք ու դարձրիք իմ հարազատ եղբօրը—Տանձատ գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Եսայեանին և բացարձակ կերպով զինեցիք նրան իմ դէմ։ Բոլորին յայտնի է, և մինչև անգամ քաղաքիս քահանաներից ոմանց ևս քաջ յայտնի եղած է, որ ինձանից 20 տա-

28169
Ն-58

ռով վերը այդ եղբօրս վրայ որչափ երախտիք եմ ունեցել, նրան մինչև քահանայական աստիճանին հասցնելս ինչ աշխատանքներ եմ կրել ու զոհողութիւններ արել զրկանքների ենթարկելով իմ գերդաստանին։ Բայց վերջը նա այդ բոլորը ուրանալով, ապերախտութեան սև կնիքը իր ճակատին դրոշմած՝ մտաւ դաւաճանի և Յուդայի ստոր դերը՝ իմ տեղս ու պաշտօններս յափշտակելու և իրեն սեպհականացնելու համար, որ և օգտուելով իրեն համար ստեղծուած հանգամանքից՝ ոչ մի միջոցի առաջ կանգ չառաւ բոլորովին մեռցնելով խիղճն ու կորցնելով մարդկային պատկառանքը...

Սրբազան հայր, չէ՞ որ Գրիգոր քահանան ձեռնադրուած լինելով յատկապէս Ցանձոտ գիւղի համար՝ իրաւունք չունէր նա ուրիշ տեղ ծխատէր դառնալու և պաշտօն վարելու առանց իւր սեպհական ծխից արձակուելու, և չէ՞ որ Տանձոտի ժողովուրդը անդադար բողոքում էր այդ օրինազանցութեան դէմ, բողոքում էր իւր արդար իրաւունքը բռնաբարելու համար, որպիսի արդար բողոքները ասում էին «Զայն բարբառոյ յանապատի», որովհետև Գրիգոր քահանան իր ստանձնած ստոր դերը յաջող էր տանում յօգուտ Ձեր։ Չէ՞ որ փաստեր էին մատուցած Ձեզ Գրիգոր քահանայի նախ իր քահանայ հօր դէմ Տանձոտում գործ դրած դաւաճանութեան և իւր ծնողաց հասցէին տուած անարժան հայհոյանքների, և ապա մատուցած էին Ձեզ նրա նաև ինձ հայհոյածի փաստերը։ Չէ՞ր որ նոյնպէս բողոքներ էին մատուցած Ձեր Կոնսիստորիային Գրիգոր քահանայ Եսայեանի դէմ Արդուինի ծխականների կողմից մէկի կնոջը նոյնպէս հայհոյելու, միւսի որդուն դպրոցում անխնայ ծեծելու համար և այլն և այլն, բայց ինչի՞ Ձեր ուշադրութեան չարժանացան

նորա դէմ գրուած բողոքները, և քաջալերելով նորա աններելի արարքներն ու յանցանքները՝ սրբագործեցին Ձեր կողմից։ Այդ բոլորից յետոյ Դուք, Սրբազան, աւելի մեծ չարիքի դռներ բաց արիք մեր առաջ երբոր բռնի կերպով հեռացնելով ինձ Արդուինից՝ հակառակ իմ ծխականների բողոքի՝ ուղարկում էիք Տանձոտ դաւաճան եղբօրս ժողովրդին հովուելու, իսկ իմ տեղը—Արդուինը նրան էիք սեպհականացնում, որով այն աստիճան լարեցիք մեր երկու քահանայ հարազատ եղբայրներիս միմեանց հետ, որ վերջապէս բոլորովին կտրուեց մեր մէջ եղբայրական բնական կապը։ Բայց այս բոլոր կատարածները երբ լիակատար յագուրդ չտուին Ձեզ, այնուհետև Դուք Կոնսիստորիայի միջոցաւ որոշեցիք վերջին անգամին կարգազուրկ անել ինձ զարձեալ հիմք բռնելով դաւաճան եղբօրս շինծու ցուցումները առանց քննութիւն կատարելու և իմանալու, թէ որքան հիմք ունէին նրանք և թէ որչափ ճշմարտութիւններ կային նորա գրածների մէջ, և այն էլ տասնըմէկ տարի առաջ եղած գործի անունով, մինչդեռ ինձ ամբաստանող Գրիգոր քահանայի իրեն կատարած զեղծումների, կեղծիքների ու կաշառակերութիւնների թարմ և պերճախօս փաստերը իրենց ժամանակին մատուցուելով Ձեր Կոնսիստորիային ոչ մի ուշադրութեան և ոչ մի պատասխանի չարժանացան, որովհետև Ձեզ համար հետաքրքիր չէին յանցանքները, այլ միայն անձնականը, որովհետև տէր Գրիգորի նման գործակալ-ագէնտներ ապագային պէտք են դալու Ձեզ... Բայց այդ էլ հարց է, թէ Գրիգոր քահանայի նման իւր ծնողացը և իւր երախտապարտ եղբօր հայհոյողը և նրանց երախտիքները բացարձակ ուրացողը արդեօք մի օր էլ Ձեզ չի ուրանա՞յ, չի դաւաճանի՞, կամ թէ՝ հէնց ուրանալ չէ՞ր Ձեզ

նրա կողմից, որը Ձեր առաջարկությունը մերժեց Բուլ-
թայիս մնալու մասին, որ յատկապէս այդ նպատակի
համար էլ բերել տուիք նրան Եկատերինոդարից։

Բայց, Սրբազան, ասացէք խնդրեմ, ինձ նման
27 տարի Հայոց եկեղեցու և ազգին ծառայող և
ծերութեան շէմքում մնած քահանայի համար Դուք
ինչպիսի՞ խղճով կայացրիք կարգազրկութեան որո-
շումը, որ կարգազուրկ անելով բոլորովին մեռցնում
էք ինձ, դորանով ճանապարհ չէ՞ք բաց անում ինձ
համար, որ ես էլ մի ուրիշին սպաննեմ իսկական
կերպով։ Եւ հետևապէս ինչպէ՞ս կարելի է զրկել կար-
գից ու հոգևոր կոչումից մէկին, երբ նա քահանա-
յութիւնը ընդունած է եկեղեցու սուրբ խորհրդով և
օծւած է սուրբ միւռոնով։ Քահանային կարելի է բա-
նադրել և զրկել իւր կոչումից միայն այն դէպքում,
երբ նա անաստուածութեան չար գաղափար է տարա-
ծում և հերետիկոսութիւն է քարոզում ու մոլորեցնում
է հաւատացեալներին, իսկ ուրիշ բոլոր դէպքերում
կարելի է քահանային միայն պաշտօնից դադարեցնել
և ոչ զրկել իւր կոչումից։ Մահմեդականը քրիստո-
նէութիւնը ընդունելու ժամանակ եկեղեցու խորհրդով
ևս միւռոնով օծւելով ստանում է քրիստոնեայ կոչումը
և Ալի անունը կորցնելով կրում է Մարկոս անունը.
բայց նա զրկւում է իր այդ կոչումից և իր անունից
միայն այն ժամանակ, երբ ուրանալով քրիստոնեայ
հաւատը կրկին վերադառնում է Մահմեդականու-
թեանը, որով Մարկոսը դառնում է նորից Ալի։ Ճիշտ
այսպէս պէտք է ընդունել նաև քահանային, որը
շնորհիւ օծման Կիրակոս անունը փոխում է Տէր
Մարկոսով։

Եւ Դուք, Սրբազան, կարող էք ուրանալ, որ ինձ
կարգազուրկ անելով դատապարտեցրել էք մի միայն

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм.ССР
им. А. Мравяна
Ц. Ереван
36093-66

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

այն բանի հետևանքով, որ ինձ չէ յաջողւել և թէ
հնարաւորութիւն չեմ ունեցել՝ ըստ Ձեր ցանկութեան՝
բոլորովին հեռանալով Արզումնից մնալ Տանձոտում,
որպէսզի Ձեր պաշտպանած Գրիգոր քահանան հան-
գիստ կերպով վայելէր Արզումնը։ Եթէ որ ես մշտա-
կանապէս մնալու լինէի Տանձոտում, էն ժամանակ
հօ ոչինչ չպիտի ունենայիք ինձ հետ և այդ որոշումը
տեղի չպիտի ունենար.—այս բանը արդէն վկայում
և հաստատում են Ձեր Կոնսիստորիայի գործերը։
Ուստի մարդկային որպիսի՞ խիղճ պիտի լինէր, որ
մի եղբօրը բարձրացնելու համար կարողանար կոր-
ծանել միւս եղբօրը և անբաղդացնէր մի ամբողջ գեր-
դաստան. սա միթէ՞ ոճիր չէր, և աննեելի՛ ոճիր։ Եւ
այդ բոլորը ինչի՞ համար, կամ թէ Գրիգոր քահանա-
յի ո՞ր արժանիքների համար։ Դուք Սրբազան, եթէ
որ սիրելով ճշմարտութիւնը կամենալու լինէք, կարող
էք այժմ քաղաքումս ապրող մեր քրոջից ու նրա
ամուսնուց՝ մեր փեսայից ստուգել, թէ Ձեր պաշտ-
պանութիւնը վայելող Գրիգոր քահանան որպիսի մի
ցեց է դարձած է եղել մեր ամբողջ գերդաստանի հա-
մար և թէ ինչպիսի՞ չար որոմներ է սերմանել մեր
մէջ, և արդէն կիմանաք թէ՝ Դուք որքան սխալւած
էք եղել նրա վերաբերմամբ։

Եւ այս բոլորը տանում էի սառնասրտութեամբ
և համբերում էի հաւատացած լինելով, որ երկնից
արդարութիւնը ճշմարտութիւնը երևան կը հանէ և ետ
դատաստանն կանէ երբևիցէ, բայց այժմ ինչպէ՞ս
լռեմ և ինչպէ՞ս տանեմ Ձեր դէպի ինձ ունեցած ա-
տելութիւնը ու անսահման թշնամութիւնը, երբ մենք
ներկայիս մեր բոլոր ունեցածից զրկւելով ու գալով
Թիֆլիս՝ գերդաստանիս քաղցը յագեցնելու, Տերկու-
թիւնը ծածկելու համար ինձ լինելու օգնութիւնը

5 0402-ստ

անգամ խաղարում ու արգելում էք։ Մեր փախուստը Արդուինից այնպիսի ձախող հանգամանքումն է տեղի ունեցել առանձնապէս մեզ համար, որ չէ յաջողել մեզ մեր ունեցածից որևէ բան ազատել ու բերել, ուստի ամենից աւելի օգնութեան կարօտ մենք ենք մնացել, և բացի մեր վրայի հագուստից երկրորդական ոչինչ չունենք ոչ սպիտակեղէն և ոչ էլ տեղաշորեր։ Իմ որդիս Մուրդուլից փախչելիս երկու անգամ կողոպուտեց տեղական տաճիկներից, որ և մերկանդամ մնալով՝ հազիւ կարողացել էլ իր հոգին միայն ազատել, և այդ որդիս ոտքին կօշիկ չունենալու համար այս անցած տարեմտին ու Ծննդեան տօներին տանը փակուած է մնացած։ Ես երդւում եմ Աստուծոյ անունով և երդւում եմ զաւակներիս արևով, որ Ծննդեան խթման օրը միմիայն երկու կոպէկ փողով ենք մնացել ու այդ տօները մեզ համար սև օր են դարձել։ Ահա այսպիսի յուսահատ վիճակում ստիպուած եմ եղել նախապէս դիմել Բարեգործական Ընկ. Խորհրդին նպաստ խնդրելու, բայց Դուք Սրբազան, նախկին վրէժով իսկոյն հանդէս եկաք խնդիրս մերժել տալու համար։ Դրանից յետոյ դիմեցի քաղաքային Կոմիտէտին, ահա այդ տեղ էլ նոյն բանը արիք յայտնելով Կոմիտէտին, որ ես իբրև թէ որեւէ օգնութեան կարօտ չեմ և այլն։

Սրբազան, միթէ՞ դա քրիստոնէութիւն է. Դուք ինչի՞ց էք իմացել կամ ո՞վ է Ձեզ համոզել իմ կարօտ չլինելս նպաստի և օգնութեան։ Ինձ ամբողջ վեց տարի չարչարելով, անխիղճ զրկանքներ ու վնասներ հասցնելով միթէ հոգի էիք թողած վրաս։ Հայոց կեղեցւոյն և ազգին ամբողջ 27 տարի անձնուիրաբար ծառայելուց յետոյ, ծերութեան շեմքում, ինձ կարգազրկութեան էք դատապարտում, այդուհանդերձ վերահաս նոր դժբաղդութիւնը մեզ բոլորովին ընչազուրկ անելով՝ երբ ստիպուել ենք մուրացկանութեան դիմել։ Դուք այդ ևս խանգարում ու արգելում էք, ապա ուրեմն ի՞նչ անենք, ամբողջ գերդաստանով երթանք ջուրը՞ ընկնենք 'ի յագեցումն Ձեր կամքի։

Վերջապէս լաւ չէք անում, Սրբազան, Դուք Աւետարանի պաշտօնեայ էք, հոր կոչումն էք կրում, այդ աստիճան ոխակալութիւնը և այդ անսահման անգթութիւնը երբէք չի վայելի Ձեզ, իմ անմեղ գերդաստանի դառն արտասունքը մի օր կայ Ձեզ իր անողոք պատասխանը. ախր Աստուած կայ որ ամեն ինչ տեսնում է, ես առիթ չեմ տալ Ձեզ այդ աստիճան չարանալու և գրգռելու իմ դէմ։

Մենք չորս հոգով (մի որդիս զինուորական ծառայութեան մէջ է) նոյեմբերի սկզբից գալով Թիֆլիս, մեր ծախքը օրական հասնում է մինչև 1 ր. 50 կոպէկի Բացի դրանից նոյեմբերի վերջերին ես իմ որդուն Արդահան եմ ուղարկել (որտեղից պիտի գնար Արդուին մեր զօրքերի ետևից, որը այն միջոցներին Արդահանից արշաւում էր Արդուինը յետ վերցնելու), որի համար ճանապարհածախք տուել եմ նրան 25 ր. դրանից յետոյ ես ինքս երթևեկելով Բաթում կարևոր գործի համար, ծախսել եմ 18 բուբլի։ Ահա մեր այս բոլոր կարիքները հոգալու համար ինձ յաջողել են հակառակ Ձեր կամքի նպաստներ ստանալ տեղւոյս քաղաք. Կոմիտէտից պ. Համ. Առաքելեանի ձեռօք 65 բուբլի և նպաստամ. Յանձաժողովից պ. Շահրիկեանի ձեռօք 25 բուբլի, բայց այդ գումարները չլրացնելով մեր բոլոր անհրաժեշտ կարիքները ստիպուած եղայ ինձ ծանօթ երեք մասնաւոր անձանց ևս դիմել, և պ. Խաչատ. Աֆրիկեանից պարտք անունով ստացել եմ 35 բուբլի, իսկ որպէս նպաստ ստացել եմ բժիշկ

20651 44 — 8 — ԱԴ

6095

4369

պ. Գասպարեանից 6 ռուբլի, և բժշ. պ. Ադամեանից 3 ռուբլի, (որոնց օրհնելով յայտնում եմ շնորհակալութիւնս) բացի նրանցից ես այլևս ոչ ոքին դիմած կամ որևէ բան ստացած չեմ չնայելով, որ դարձեալ խիստ կարօտ ենք ճնացած ամեն կերպ օգնութեան, որովհետև ես և որդիս կանք անգործ։

Արդ, այս բոլորը դնելով հրապարակի վրայ, ես լիայոյս եմ, որ ինձ նման հալածուածի, թալանուածի և ամեն ինչից զրկուածի անհրաժեշտ կարիքները մօտ կըլինի Թիֆլիսի ազգայնոց ազնիւ և զգայուն սրտերին, որոնք չեն թոյլ տայ մեզ վերջապէս յուսահատութեան մէջ խեղդուելու, որոնք պէտք է և որոշեն վերջապէս, թէ Դուք Սրբազան, հոգևոր դատաւոր էք, թէ՞ ինտրիգան, հոգևոր հայր էք, թէ՞ եղեռնագործ։

Արդուինի նախկին ծխատէր՝
Յովհաննէս քահ. Նայեան.

28 Յունուարի 1915 թ.
Թիֆլիս։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Тип. „Эсперанто“ Տպ. «Էսպերանտո».

281.6
Ն-58

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Масикяна

ԲԲ 2002

NL0031319

4235